

ՄԻՔԱՅԵԼ ՄԻԱՆՍԱՐՅԱՆՑԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ  
ԵՐԳԱՐՎԵՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ս. Ա. ՎԱՐԳԱՆՅԱՆ

19-րդ դարի 50—60-ական թթ. հայ լուսավորական պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի մշակութային, հասարակական գործիչ, հրապարակախոս Միքայել Միանսարյանցը: Բազմարժանեղակ նրա գործունեության ոլորտները ընդգրկում են հրապարակախոսություն, մանկավարժություն, մատենագիտություն, ժողովրդական բանահյուսություն և այլն: Միանսարյանցը անդրադարձել է հատկապես հայ երգի ու երգարվեստի խնդիրներին: Երգերի նըկատմամբ Միանսարյանցի վերաբերմունքը պայմանավորված էր 19-րդ դարի երկրորդ կեսին հայ մշակութային կյանքում առաջ քաշված նոր պահանջների թելադրանքով: Հայ քնարերգության վերածննդն ու վերահաստատման, նոր կյանքի վերկոչելու խնդիրը դարձել էր հայ մշակութարանների մտահոգության գլխավոր առարկան: Հայ ժողովրդին անհրաժեշտ էր վերադարձնել իր կորցրած երբեմնի բանաստեղծական ավանդույթներին, որոնք մոռացության էին մատնվել հայոց պետականության կորստյան պատճառով: Ծրված լինելով աշխարհի տարբեր հատվածներում՝ հայ ժողովուրդը մոռացել էր իր ազգային երգն ու երաժշտությունը և ենթարկվելով այլևայլ ազդեցությունների՝ կորցրել՝ անաղարտությունը: Միք. Նալբանդյանը խորապես ցավում է, որ հայ ժողովուրդը չունի ազգային երգ ու երաժշտություն: «Հատուկտոր բաներ,— գրում է Միք. Նալբանդյանը,— որ անփորձ մարդիկ ազգային են համարում, ժողոված են թուրքից, թաթարից, պարսից, հույնից և ուրիշներից, որոնց ժամանակ առ ժամանակ հպատակեցան հայք»<sup>1</sup>: Մ. Նալբանդյանին մտահոգում է նաև երգերի կառուցվածքային փոփոխությունների խնդիրը: Նրանք՝ «... մեծ մասամբ հետևած են թուրք ոտանավորներին, հիմնը ված միմիայն ոտքերի և վերջերի նույնահանգության վրա»<sup>2</sup>: Նույն մտահոգությամբ Գամառ Քաթիպան «Հազար ու մեկ ծակուծակի, մի քանի խորշերում մնացած նշխարներն» է ժողովում, որովհետև «թիչ ժամանակից հետ անպայման վտանգի տակ են ենթարկված»<sup>3</sup>: Շրջազայելով հայկական գյուղերում ու քաղաքներում՝ Գամառ Քաթիպային խորապես հուզել է հայ երգի ու երաժշտության ինքնատիպ կառուցվածքի, շափական ձևերի խաթման իրողությունը: «Ինչ որ Հաշտարխանում ուրախ ձայնով են երգում, նույնը Նախիջևնում երգում են հանգրստյան շարականի եղանակով»<sup>4</sup>: Ժամանակի պահանջը խորապես զգաց Միք. Միանսարյանցը՝ ձեռնամուխ լինելով հայ երգի փրկության գործին: «Մեր երգերու եղանակը զանազան է,— գրում է Միք. Միանսարյանցը.— Տանկաստան՝ տաճիկ, Վրաստան՝ վրաց, Երևան, Շուշի, Ազուլիս և Պարսկաստան՝ պարսից երգերի եղանակի նման, այսինքն՝ ինչ ազգի ներգործության տակ եղել ենք, նույն ազգից էլ երգերի եղանակն ենք վեր առել»<sup>5</sup>: Միանսարյանցին մեծ ցավ է պատճառում նաև այն հանգամանքը, որ եղանակներից բացի, հայերը սեփականացրել են և օտար բաներ: «Տեր, կեցող դու զհայա՞ք երգը օտար Օգինսեղի պոլոնեզի եղանակով և «հայոց ազգիկները» վրացոց «Ախ դիլավ, դիլավ» եղանակով են երգում և Ռուսաստանի համալսարաններում սովորող և այնտեղ ապրող հայերն էլ այսպիսի երգերը հանուշիվ լսում և կատարում էին»[է]: Երգի հանդեպ հայ ժողովրդի ներքին պահանջն այնքան մեծ էր, որ Միանսարյանցի իսկ վկայությամբ՝ «պարսկահայատակ հայ արհեստավորները, մասնավորապես որմնաշենները մշակության ժամանակ ունեին միշտ մի երգիչ, որին լսելով շինում են յուրյանց գործը»[է]: Ապրելով Պետերբուրգում, սերտ կապերի մեջ գտնվելով իր հայրենակիցների հետ՝ Միք. Միանսարյանցը զգացել է վերջիններին՝ հայ երգի հանդեպ ունեցած մեծ սերն ու կարոտը: «Որ-

<sup>1</sup> Միք. Նալբանդյան, Երկերի լրակատար ժողովածու, Երևան, 1947, հ. 1, էջ 222:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Գամառ Քաթիպան, Աղգային երգարան Հայոց, Ս. Պետերբուրգ, 1858, էջ 2:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Միք. Միանսարյանց, Քնար հայկական, Ս. Պետերբուրգ, 1888, էջ ԺԸ: Այսուհետև այս գրքից հղումները շարադրանքի մեջ, փակագծերում էլը:

քան սրտառու է լինում,— գրում է Մ. Միանսարյանցը, — որքան մեր ցնծութիւնը կատարյալ աստիճանի է հասնում, երբ որ նորա երգի լեզուն էլ հասկանայի է լինում մեզ: Բոլոր այս վեհ և սրտաշարժ զգացմունքները հասնում են կատարյալ աստիճանի, երբ որ այդպիսի պատվական ծայնով ասած և կանոնավոր կերպով երգած երգը մեր ազգային, մեր պատվական լեզվով ասած և գրած երգն է: Ո՞ր հայը կարողացել է լայն առանց արասուրբի, առանց հոգւոյ և բոյոյ զգացանց, զգրումների, երբ որ նորա առջև երգել են «Տէր, կեցող դու զհայաստան» կամ «Ափսոս ջեզի, հայոց խեղճիկ ժողովուրդ», «Սրկու ձեռին երկու մում» և այլ պատականները» [9]: Այս ամենի խոր զիտակցմամբ ու մեծ սրտացավութեամբ Միանսարյանցը ձեռնամուխ է լինում հայ ազգային երգերի հրատարակման աշխատանքներին: Բազմաթիվ գրավոր աղբյուրներից և ձեռագիր ժողովածուներից նա հավաքում է հայ ժողովրդի բազմաբովանդակ կյանքը արտացոլող երգեր և 1868 թ. Ս. Պետերբուրգում հրատարակում «Քնար հայկական» նշանավոր ժողովածուն: Վերնագրի ընտրութիւնը ինքնանպատակ չէր: Հայկական քնարի լարերի կանչով Միանսարյանցը ազգարարից հայ երգի վերածնման իրողութիւնը և փորձեց նրա ծայնով օտարել հայ կյանք ու կենցաղից օտարահունչ երգն ու երածշտութիւնը: Ժողովածուում տեղ են գտել 432 միավոր քնարական բազմաբնույթ ու բազմաբովանդակ ստեղծագործութիւններ՝ հավաքագրված 46 անուն տպագիր և ձեռագիր աղբյուրներից (6-ը՝ պարբերական մամուլ, 40-ը՝ ձեռագիր ու տպագիր տաղարաններ, բազմաբնույթ ժողովածուներ):

Բնագրերի ժամանակագրութիւնն ընդգրկում է 1840—1860-ական թթ.: Միանսարյանցը հայկական քնարի տակ հավաքագրել է զանազան աղբյուրներում կուտակված և հնագույն շրջանից հասած ժողովրդական և հոգևոր երգեր՝ շարականներ, ժամերգութիւններ և 19-րդ դ. երկրորդ կեսում տարբեր հեղինակների, աշուղների կողմից գրված շափածո ստեղծագործութիւններ: Բնագրերը դասակարգելիս հեղինակը կլակետ է ընդունել հայկական երգերի բազմաբնույթ կողմերը: Առաջնորդելով հիշյալ սկզբունքով՝ Միանսարյանցը երգերը տեղաբաշխել է ըստ հետևյալ բաժինների.

1. Հոգևոր երգեր, 2. օրորոցային երգեր, 3. հասարակաց (ոսմական) երգեր, 4. ազգային, ազգասիրական և զինվորական երգեր, 5. ուսանողաց երգեր, 6. սիրո երգեր, 7. տըխուր երգեր, 8. խնջույթի, ուրախութեան, հարսանյաց և երգիծական երգեր, 9. խառը բանաստեղծութիւնք:

Վերնագրերն իսկ հուշում են, որ Միանսարյանցը չանցել է ըստ կարելիւոյն ներդաշնակորեն ներկայացնել հայ բարբեր, կյանք ու կենցաղի բազմաբնույթ կողմերն արտացոլող երգերը: Երգերն ըստ բնույթի և բուն ժողովրդական բանահյուսական են, և ժողովրդական ոճով գրված հեղինակային ստեղծագործութիւններ: Զբաղարարվելով երգերի հավաքագրմամբ՝ Միանսարյանցը ձեռնամուխ է լինում նաև հին ձեռագիր մատյանների ուսումնասիրութեանը, ժանոթանում նրանցում տեղ գտած հայկական երածշտական մշակույթի ծագման, զարգացման խնդիրները լուսաբանող հետազոտութիւններին, տպագրված երգերի բնագրերին, նրանց ինքնատիպութեանը, կրած ազդեցութիւններին, հոգևոր երգ-երածշտութեան պատմութեանը, նրանցած ուղուն: Միանսարյանցն իր «Քնար հայկական»-ի առաջաբանում հետազոտական վերլուծումներ է կատարել երգարվեստի խնդիրների շուրջ: Նա փորձ է արել բացահայտել երգի կրթական, դաստիարակչական նշանակութիւնը ազգային մտածողութեան ձևավորման ու զարգացման գործում: «Առաջի աչաց ունենալով այն բոլոր երգարանները,— գրում է Մ. Միանսարյանցը,— որ մենք տեսած ենք, մյուս կողմանն, նայելով մեր ազգի ցրվեալ, տիեզերքիս զանազան երկրներում քնակվելուն, նոցա երգերի և այլ տեղական զանազանութիւնքը, մենք մտադիր եղանք ի լոյս հանել այնպիսի տպագրութիւն, որ ա) ցույց տա երգի ու երգեցողութեան դաստիարակչական և այլ նշանակութիւնը և խորհուրդը. բ) հաղորդի որքան կարելի է լիւրջ տեղեկութիւն մեր ամենահին ազգային երգոց, նոցա պատմութեան և նշանակութեան մասին, գ) պարունակի յուր մեջ որքան կարելի է լիւրջ շտեմարան ազգային քնարերգութեան թե՛ հոգևոր և թե՛ աշխարհական բանաստեղծութեանց, որոք ունին այժմյան ժամանակ, որևիցե նշանակութեան ազգային գրականութեան մեջ կամ ախորժիւի են որևիցե երկրի հայոց ժողովրդայնք, թե յուրյանց ընտիր և վեհ պարունակութեամբ, թե բանաստեղծական և ոճի գեղեցկութեամբ կամ թե այն պատճառով, որ արտահայտում են ժամանակի և ժամանակակիցների դատողութիւնքը, դ) մենք կամենում ենք, որ այդպիսի հավաքածուն զանազան տեղեր ցրվեալ մեր հայրենակիցներուն մտավորապես և բանաստեղծականապես կծանոթացնե և կմտնեցնե իրար հետ: Ավելորդ ենք համարում ապացուցանել այն միտքը, թե որքան անհրաժեշտ և անհապաղելի բռնադատող կարողութիւն են զգում մեր այժմյան յուրյանց պատիւը հասկացող, զգացող և հարենի ազգային լեզուն իմաստավորող հայ աշակերտք և երիտասարդներ մեկ այսպիսի ժողովածուի, ուր միատեղ գումարեալ և ներկայացեալ լինին հայոց լեզվագիտութեան և բանաստեղծութեան տեղական զանազանութիւնք, և այլն և այլն» [ԺԸ—ԺԹ]: Միանսարյանցի առաջադիր խնդիրը ազնիվ է ու ազգասլով. երգերի հրատարակութիւնը ծառայեցնել հայ ժողովրդի համախումբ կեցողութեան գործին: Հայ ազգային երգ ժողովրդի լայն խավերին, հատկապես դպրոցականներին հաղորդակից դարձնելու նպատակով Միանսարյանցը

գիտատեսական մի շարք առաջարկներ է անում հայ մանկավարժներին: Միանաարյանցին մտահոգում է այն, որ կան դպրոցներ, որտեղ առհասարակ ազգային երգեր են ուսուցանում: Նա հայ մանկավարժներին և ծնողներին առաջարկում է հետևել զերմանացիների օրինակին՝ «ուր ընտանիք չկա, որ շունենա Աստվածաշունչ և երգարան» [ԺԼ—ԺԲ]: Երգը, բայց Միանաարյանցի, կարևոր նախապայման է լեզվի ուսուցման, բաների ճիշտ վերարտադրան համար: «Երեխան մայրենի լեզվով ասած երգը սովորելով, սովորում է միևնույն ժամանակ յուր մայրենի լեզուն, սովորում առանց բերականության, գործնականապես» [ԺԼ—ԺԲ],— գրում է Մ. Միանաարյանցը: Երգը նպաստում է երեխայի բառապաշարի հարստացմանը, իսկ բաների Իմացությունն էլ՝ արտաքին աշխարհի ընկալմանը, շրջապատող իրերի ու երևույթների մասին երեխայի պատկերացումների ձևավորմանը, մտածելու ունակությունը: «Երգերի պարունակությունը,— գրում է Միանաարյանցը,— արտահայտվում է բաներով», որքան նոր բառ սովորեց երեխան, այնքան նոր առարկայի կամ գործողության հետ ծանոթացավ, նշանակում է այնքան նրա մտավոր գիտությունը հարստացավ, նրա խորհելու, երևակայելու, համեմատելու և այլ ընդունակությունը նոր նյութերով, նոր առարկաներով, նոր գաղափարներով հարստացավ» [Ե]: Միանաարյանցը անդրադառնում է նաև երգի՝ մարդու հուզաշխարհի վրա ներգործելու բացառիկ ուժին ու կարողությունը: Նրա իսկ վկայությամբ՝ «Երգը ոչ միայն աստվածապաշտական, ազգասիրական, երախտագիտական, որդեսիրական և եղբայրասիրական զգացումներ է ներշնչում, այլև այն քնքրուացնում, ազնվացնում, սրբացնում է թև տխուր, թե ուրախ և թե Ամենաբարձրայն ունեցած զգացումները» [ԺԼ—ԺԲ]: Խորձացնելով երգի հասարակական, գեղագիտական, կյանքի բազմաբնույթ կողմերի հետ ունեցած փոխհարաբերությունների խնդիրը՝ Միանաարյանցը վկայակոչում է այն ժողովուրդներին, որոնց կյանքում մեծ է Լիզի երգի բարոյական, գեղագիտական դերն ու նշանակությունը: Հետ հին հույների, երգը ոչ միայն կարող է փոթորկել մարդու հուզաշխարհը, այլև՝ յուրովի շունչ ու կենդանություն տալ ողջ բնությանը, կենդանական աշխարհին, կախարհել մարդուն շրջապատող իրականությունը իր խորհրդավոր ելեղներով: «Հին հույները,— գրում է Միանաարյանցը,— կամենալով ցույց տալ կանոնավոր երգեցողության և ազգու բանաստեղծության թուլարար ներգործությունը և գործությունը մանրագլխին ստրի և զգացմանց վերա, ասում էին, թե Օրփեոսը երգում էր և միևնույն ժամանակ նվագում տավղի վրա, ծանոթը, գետները, ծովը շրեբը և կենդանիները, և վայրենի անասունները զաղարում էին արածել և հիացած լսում էին Օրփեոսի նվագակցությունը» [ԺԼ—ԺԲ]: Հետ Միանաարյանցի, ազգային երգերը նպաստում են ազգային հայրենասիրական ոգու արթնացմանը, ազգային գաղափարների ներշնչմանը: «Դժվար չէ հասկանալ, թե ինչ մեծ և խորհրդավոր ներգործություն ունին ազգային լեզվով ասած երգերը՝ ազգայնության և հայրենասիրության ոգին արթնացնելու և զարգացնելու»: Երգի ներգործուն ուժի մասին իր մտքերը հիմնավորելու նպատակով նա բազմապիսի օրինակներ է բերում այլ ժողովուրդների կյանք ու կենցաղից: «Քրիստոսի ծնունդի հետ, 1—5 դարու գերմանացիք, բրիտանացիք և այլ հյուսիսային ազգեր ունեին առանձին բանաստեղծներ և երգիչներ՝ բարդ անունով, որոնք պատերազմից առաջ կարոտասում էին, վառում, բորբոքում պատերազմողների զգացումները և քաջությունը ազգային երգերով» [ԺԼ]:

Միանաարյանցը հայ ազգային երգեցողության ուսուցման գործի հեռանկարները կապել է ազգանվեր այն անհատների հետ, որոնք իրենց մեջ ունեն ազգօգուտ գործունեություն ծավալելու բարոյական պարտքի զգացում: Վկայակոչելով ժամանակի հայտնի երգեցողության դասատու գերմանացի կուղվիգ էրկին՝ նա կոչ է անում. «Շայնց ազգը սպասում է յուր էրկին, որ կյանք տա, իրագործե հայոց ազգային զտեալ և ազգային ոգով տպավորեալ երգեցողությանը թե հոգևոր և թե աշխարհական երգությ» [Ժ]: Հարկ է նշել, որ Միանաարյանցը իր ժողովածուում հրատարակած քնադրերի հանգեպ հանդես է բերել պատասխանատվություն, քուրբիզություն: Օգտագործելով Գր. Գապասախյանի՝ Պոլսում հրատարակած «Երթույհ, որ կոչի Նուազարան» գրքի քնադրերը, Միանաարյանցը նախապես ծանոթացել է ժողովածուի հեղինակի՝ հոգևոր երգերին տված գնահատականներին, խորացել հետազոտված խնդրի էություն մեջ, արժեքներ է այն, միաժամանակ մի շարք արժեքավոր գիտողություններ արել ի պաշտպանություն հայ հոգևոր երաժշտության ինքնուրույնության: Հայտնի է՝ Գր. Գապասախյանը հայ հոգևոր երաժշտության ծագումը կապել է հունականի հետ: Զենքերով հիշյալ ազգեցությունը՝ Միանաարյանցը միաժամանակ գտնում է, որ հայկական հոգևոր երաժշտությունը իր որոշակի առանձնահատկություններով հիմնականում ինքնուրույն է եղել: Գրանում համոզվելու նպատակով նա այցելել է Մոսկվայի և Քիֆիսի հայկական եկեղեցիներ, լսել այնտեղ կատարվող հոգևոր երաժշտության նմուշներ, այն համեմատել Գապասախյանի գրքում գետեղված քնադրերին և եզրակացրել, որ հիշյալ երգերի գործածությունը «լսած չենք Մոսկվայի, Պետերբուրգի և Քիֆիսի եկեղեցիներում»:

Մ. Միանաարյանցը մեծ արտացավությամբ ու ամենայն նվիրումով է ձևանամուտ եղել

Հայ ազգային երգերի փրկութիւն, պահպանման ու հարատեւման գործին: Եւ իր «Քնար հայկական» ժողովածուով նպաստել է հայ ազգային երգերի հիմքերի ամրապնդմանը:

Քոչ գիտակցելով ազգային երգի կրթական, դաստիարակչական դերը ժողովուրդների կյանքում՝ եւ իր «Քնար հայկական» ժողովածուի բնագրան է ընտրել վերջինիս՝ բարոյական դերն ու նշանակութիւնը բացահայտող հետեւյալ տողերը:

Սիրտդ բաց նոցա,  
Ով երգ է երգում,  
Երգը շա՛ր մարդկանց  
Չի զվարեացնում:

(Քետեճ)

Հայ ազգային երգի և երգարվեստի խնդիրներով զբաղվող մասնագետներին, անշուշտ, հետաքրքրել ու կհետաքրքրեն Միք. Միանսարյանցի՝ ժամանակին արտահայտած մտքերը և հետազոտական փորձերը վերահիշյալ բնագավառի վերաբերյալ: Այն այսօր էլ չի կորցրել իր արդիականութիւնը:

**С. А. ВАРДАНИЯН—Заметки Микаела Миансарянца о пробл.мах армянского песенного творчества.**—Известный деятель культуры XIX в. Микаел Миансарянц был серьезно озабочен проблемой сохранения чистоты армянского национального песенного творчества: Собрал из различного рода источников 432 единицы разнообразных лирических произведений и опубликовал их в сборнике «Мира Армени» (СББ, 1868); Миансарянц предпринял попытку извлечения исконно национальных образцов музыкально-песенного творчества и отделения от них заимствований и чужеродных элементов, имевших широкое распространение в армянской действительности. В предисловии к сборнику он высказал интересные и ценные соображения по поводу армянского национального песенного творчества, не утратившие своей актуальности и в настоящее время.